ԹՈՒՐՔԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՉՔԵՐՈՎ

ՊԱՍԿՈՒԱԼ ՕՀԱՆՅԱՆ

1915-1923 թվականների ցեղասպանությունը գործի դրվեց հայերի դեմ, առաջինն այն չորս ազգային խմբակցություններից, որոնք ճշտորոշված են Ցեղասպանության պայմանագրի երկրորդ հոդվածով: Մեր ժամանակաշրջանում, իրավագիտական մշակույթի զարգացումով, երբ միջազգային հասարակությունն ընդունվել է իբրև համաշխարհային խմբակցություն, որպես ընկերային ու տիեզերական կարգուսարք, իր առանձնահատուկ և հիմնական իրավունքներով, անհատ անձնավորություններն են, որ կազմում են այդ հասարակությունն ամբողջ աշխարհում, և որոնց հենց վերաբերվում է Միջազգային իրավունքով պաշտպանված իրավական հիմքը:

Հայաստանի հանրապետությունը կարող էր անհետանալ ամբողջությամբ, եթե 1918-ին, ինչպես նպատակադրվել էին Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը և զորավար Հազիմ Գարաբեքիրը, կործանարար ալիքը կարողանար առաջանալ դեպի արևելք: Ասել կուզի՝ 1915-ին շղթայազերծված թուրքական ցեղասպանությունը եղավ իրագործված և հանցագործության առաջին հանգրվանը, որ նշանակում է՝ մեկ կողմից շոշափելի սպառնալիք ընդդեմ մի պետության գոյության, որը պատկանում է հայ ազգային խմբակցությանը, և ապա՝ մի սպառնալիք միջազգային խաղաղության: Այդ ցեղասպանությունը միաժամանակ եղավ հանցագործության փորձություն, կանխավ քաղաքական նույն իշխանության կողմից, որն իր ոճիրը սկսեց գործադրել 1915-ի ապրիլի 24-ին զանգվածային և սիստեմատիկ կերպով հարձակվելով 2000000 անմեղ քաղաքացիների անհատական, ֆիզիկական գոյության վրա, վտանգելով նրանց ազատությունը և առողջությունը: Այս բոլորը ոչ միայն հայկական պետականության, այլ նաև միջազգային իրավական հիմունքներն են, ճիշտ այս պատճառով էլ Միջազգային իրավունքը պետք է ստանձնի նրա պաշտպանությանը և զորավիգ կանգնի նրա այն ձգտումին, որի նպատակն է ցեղասպանության պատասխանատվությունն ուղղակի վերագրել Թուրքիայի հանրապետությանը, որն իրավական ժառանգորդ է Օսմանյան կայսրության:

ՈՒՐԱՑՈՒՄՆ ԻԲՐԵՎ ՆԱԽԸՆԹԱՑ ԱՆՊԱՏԺԵԼԻՈՒԹՅԱՆ

Մարդկության դեմ գործվող ոճիր է ցեղասպանությունը, որի ենթակա զոհն ազգային, ցեղային կամ կրոնական խմբակցությունն է: Հայ ազգային խմբակցության պարագային, թուրք պետությունն է, որ բռնաբարեց նրա մարդկային իրավունքները: Այս ոճրի մեջ երևան են գալիս ծանրացուցիչ բոլոր պարագաները՝ կանխամտածվածություն, նենգություն և ծայրահեղ դաժանություններ: Այնպես որ, քանի Թուրքիան ուրանում է ոճրի իր պատասխանատվությունը, միջազգային միջամտության իրավունքն անդրժելի է:

Հայերի դեմ գործված թուրքական ցեղասպանությունը հանցագործություն է, որ գործադրվեց ոչ միայն պետական քաղաքականության աջակցությամբ, այլ նաև առաջադրվեց, ծրագրվեց և ուղղակիորեն գործադրվեց թուրք պետության կողմից: Դա մի օրինազանցություն է, որ անպատիժ մնալով նախատում է մարդկային տիեզերական զգայնությունը: Ցեղասպանությունը, լինելով միջազգային հանցագործություն, լիազորում է որևէ պետության՝ գործելու միջազգային իրավասությամբ, եթե այն պետությունը, որի սահմաններում գործված է այդ ոճիրը, չի գործադրում նախընտրելիության իր իրավունքը ու պարտավորությունը: Հետևաբար՝ թուրքական ցեղասպանությունը Թուրքիայի «ներքին հարց» չէ, այլ միջազգային ոճիր, որի հետապնդումը պետք է իրականացվի պատժական միջազգային և մնայուն իրավասությամբ, ինչպես նաև միջազգային իրավական կազմակերպությունների ձեռնհասությամբ:

Անբավարար են տարբեր հրատարակությունները, սեմինարները, համագումարները, նույնիսկ՝ միջազգային դաշնագրերը: Անհրաժեշտ է հանգել պատժական հետապնդումի՝ պաշտպանելու համար ոտնահարված իրավունքները: Այս է պահանջում ընկերային կարգուսարքի պահպանումը, միջազգային խաղաղությունն ու ապահովությունը, բայց մանավանդ՝ անհատի անձնական իրավունքների գերակայությունը, որ Միացյալ ազգերի կազմակերպության հիմնական առաջադրանքն է: Թուրքական կամապաշտությունը, որ ծայրահեղորեն ապավինում է գերիշխանության գաղափարին, իր ժխտականությամբ անտեսում է միջազգային պատժական իրավունքի սկզբունքները, ինչպես ավանդական, այնպես էլ ներկայիս՝ ի զորու եղող մարդկային իրավունքները:

Այսօր մենք ականատեսներն ենք մի երկվության՝ ընդմեջ ճանաչումի և ուրացումի: Միջազգային իրավունքի մեջ՝ ճանաչումը մի պետության կողմից ձևակերպված հայտարարությունն է, որով նա ընդունում է մի արարքի ու գործողության գոյությունը: Ուրացումը հայտարարություն է հակառակ ուղղությամբ: Թուրք կառավարությունը ապավինում է ստատուս քվոյի: Հայկական հարցի մեջ փոքր պետությունները, բնականաբար, ձեռնպահ են մնում: Իսրայելը գործում է մեղսակցությամբ և կողմնակցությամբ, իսկ Միացյալ նահանգները պաշտպանում է ոճրի հեղինակին:

Փաստորեն գտնվում ենք այն բացահայտ իրողության առջև, որ Թուրքիայի իրավական դրությունը վստահելի չէ երբեք: Թուրքիայի ներկա կեցվածքն ուղղակի և բացահայտ կերպով նույնակերպ հանցագործության

է մղում ուրիշներին և իբրև նախադեպ է ծառայում ապագա հավանականությունների համար, որ որևէ ուրիշ պետություն՝ ապավինելով միջազգային անպատժելիությանը, դիմի նոր ցեղասպանությունների:

Առավել ևս, Թուրքիայի դիրքը համազոր է ոճրի ջատագովումին: Ցեղասպանության ջատագովումն արդեն իսկ ներառված է մի շարք երկիրների ազգային օրենսդրության մեջ:

1944թ. դեկտեմբերի 1-ից ուժի մեջ գտնվող գերմանական պատժական օրենսգիրքի 130-րդ պարբերությունն իբրև հանցագործություն է սահմանում այսպես կոչված «Աուշուիցի սուտ»-ի տարածումը: 1995-ի իսպանական պատժական օրենսգրքի 607 հոդվածի երկրորդ ենթադիրը պատիժ է նախատեսում այնպիսի «գաղափարների և վարդապետությունների տարածման համար, [որոնք] ուրանում կամ արդարացնում են ցեղասպանական հանցագործությունը»:

Ֆրանսիական օրենդրությունը 2001թ. օրենքով պաշտոնապես ընդունեց Թուրքիայի իրագործած ցեղասպանության վաստը:

Ցեղասպանությունն ընդունելու՝ Թուրքիայի կառավարության ժխտումը կարող է մեկնաբանվել իբրև «...չեմ հրաժարվի իմ արարքների որևէ մեկից, ներառյալ հայերի ենթադրյալ ցեղասպանությունից, և եթե պետք լինի կրկնել, կգործեմ նույն ձևով»:

Շատ անգամ մտքի և գաղափարների ազատությունները շահագործվում են զերծ մնալու համար պատժական իրավունքից և մղելու համար դա այնպիսի ոլորտներ, ուր կարելի լինի նրանց տարբեր մեկնաբանություն տալ:

Հիշենք, որ վերջերս Թուրքիայի վարչապետը պնդում էր, որ ցեղասպանությունը պատմաբանների հատուկ նյութն է: Սխալ է: Ցեղասպանությունը հանցանք է, որ իրագործվում է ամբողջ մարդկության դեմ, հետևաբար վերաբերում է յուրաքանչյուր անհատին, ներառյալ նաև՝ պատմաբաններին, ուր էլ լինի իրենց կեցության վայրը և կապ ունենա թե ո՛չ՝ հայերի հետ:

Ռիչարդ Սապպան գրել է. «Ոճիր է ուրանալ իրականությունը. իրականության ուրացումը, ի վերջո հանգում է արդարության ուրացման: Մեր ժամանակաշրջանը տեսավ «դատավորների ժամանակին» գալուստը, որ նաև է՝ իրավունքի ժամանակը: Եվ սա արդարության նախադուռն է ընդդեմ կամայականության (իր բոլոր տագնապներով, պատերազմներով, դժբախտություններով և նվաստացումներով), ամենից ապահով երաշխավորությունը՝ ընդդեմ «պատմության սպանիչների» (ըստ ֆրանսիացի վիպասան Տիտյե Տենինկի մի արտահայտության), ընդդեմ ժխտողապաշտների, որոնք թշնամի են մարդկության»:[1]

Հայերի դեմ գործած ցեղասպանությունը ժխտելն այնքան անարգ է, որքան փորձել ուրանալը, որ 1974-ին Կիպրոս ներխուժելով՝ թուրքերը չսպանեցին հազարավոր անմեղներ և ոչ էլ բռնագաղթի դատապարտեցին ուրիշ հազարավորներ, որ Թուրքիան համաձայնեց Սադդամ Հուսեյնի հետ, որպեսզի իր օդուժն անպատիժ կերպով մտնի Իրաքի օդային սահման, նապալմ ռումբեր տեղացնելու համար հազարավոր անզեն քրդերի վրա: Բացի այդ, արդեն իսկ դիմելով Իսրայելի կառավարությանը և միջազ-

գային սիոնիզմին նշենք, որ եթե Իսրայելը ժխտում է Թուրքիայի իրագործած ցեղասպանության իրողությունը, ինչ էլ լինեն այդ ժխտումի պատճառները. տրամաբանության ի՞նչ հիմունքով կարելի կլինի ինչ որ մեկին արգելել, եթե նա իր հերթին պնդի, թե հրեական Հոլոքոստը քաղաքական խոշոր կեղծիք է, որքան դատապարտելի լինի նման կեցվածքը:

Իննսուն տարին մեծ ժամանակահատված է: Բայց իննը տասնամյակները թույլ են տալիս անել այս ժամանակամիջոցի հաշվեկշիռը: 70-ականներին և 80-ականների սկզբներին Արգենտինայի հանրապետությունը թատերաբեմ դարձավ քաղաքական բռնարարության մի ցավալի հոլովույթի՝ արգենտինյան հանրության մի կարևոր մեկ հատվածի դեմ: Սակայն ժողովրդավարական կարգերի հաստատումից հետո երկրի քաղաքական և իրավական իշխանությունները ջանացին սրբագրել գործադրված խախտումները: Նույն բռնարարությունը պատահեց նաև Թուրքիայում՝ 1909-ից սկսված և հետո: Այնինչ՝ մինչև այսօր հայ զոհերը և նրանց ընտանեկան պարագաները օրենսդրական պաշտպանություն չեն ստացել թուրքական խորհրդարանի կողմից: Թուրք դատավորները ևս, այսինքն նրանք, որոնք բարձր իրավունք և գերագույն պարտավորություն ունեն՝ գործադրելու այն իրավասությունն ու ձեռնհասությունը, որը տվել է իրենց միջազգային իրավակարգը, ոչինչ չեն արել մինչև այսօր դատելու համար ցեղասպանության ոճիրը, որ գործադրվեց իրենց երկրի սահմաններում:

Դատելու և պատժելու իրավունքն ու պարտավորությունը նախ և առաջ պատկանում է այն կառավարությանը, որի իրավասության սահմանների մեջ է կատարվել հանցագործությունը: Այն դեպքում, երբ տվյալ կառավարությունը հրաժարվում կամ խուսափում է այդ իրավունքից կամ պարտավորությունից, աշխարհի որևէ երկրի դատարան կարող է ստանձնել վնասվող կողմի պաշտպանությունը: Սակայն հակառակ իրավական այս հանգամանքին, ցարդ ոչ մեկ դատարան հանդգնեց ամբաստանյալի աթոռին նստեցնել թուրքական պետությունը, գոնե՝ հաստատելու համար պատմական ճշմարտությունը:

Ուրեմն ի՞նչ է պետք անել:

Չի կարող չառարկվել, թե այսօր գործող միջազգային օրենսդրությունը հայտարարում է պետական գերիշխանության և դատական հետազդեցության սկզբունքները, ինչը ենթադրում է, որ Միջազգային պատժական ատյանը իրավասու չէ դատելու իր կազմության նախորդ հանցագործությունները: Հռոմի Կանոնագրության 24-րդ հոդվածը Միջազգային պատժական իրավունքին չի վերաբերում, այլ միայն սահմանափակում է Միջազգային պատժական ատյանի գործունեության ժամանակը. ասել է թե՝ Հռոմի Կանոնագրության՝ գործողության մեջ լինելուց առաջ կատարված հանցագործ արարքները չեն կարող անպատժելի մնալ, որովհետև նման պարագաներում կարելի է կիրառել Համաշխարհային արդարության սկզբունքը: Համաշխարհային արդարության սկզբունքի ուժով, Թուրքիայի պետական շահերից վեր պարտադիր է Մարդկային միջազգային իրավունքի կիրառումը, որի բաղկացուցիչն է 1948թ. դեկտեմբերի 9-ի Պայմանագրությունը՝ ցեղասպանական ոճրի կանխարգելման և զսպման համար: Դրանից բացի, ըստ Դաշնագրերի իրավունքի վերաբերող Վիեննայի պայ-

մանագրության՝ օրենքները, որոնց նպատակն է պահպանել միջազգային հանրության կողմից ընդունված գերագույն արժեքները, պարտավորող են բոլորի համար, և ընդունելի չեն նրանց հակադրվող համաձայնագրերը: Նյու Յորքի 1966թ. դեկտեմբերի 19-ի Քաղաքացիական ու քաղաքական ուխտի 2-րդ հոդվածը շարադրում է աշխարհի քաղաքացիների իրավունքներն ու պետությունների պարտավորությունը՝ նրանց դատական գործնական հսկողության ու պաշտպանության համար: Ըստ համաշխարհային արդարության սկզբունքի, երբ մի պետություն մերժում է գործադրել պատժական իր իշխանությունը, օրինական է, որ որևէ այլ պետություն գործադրի իր իրավասությունը՝ հետապնդելու համար ցեղասպանական ոճիրը:

Շատ անելիքներ ունենք: Հետևողականորեն պետք է ընդունենք, որ զուտ դատական ճշմարտությունները բավարար չեն, որպեսզի գործադրվեն, եթե նրանք չունենան քաղաքական ուժ, որ յուրաքանչյուր երկրի մեջ զօրավիգ լինի իրենց: Դատականի ստորադասությունը քաղաքականին, մեր կարծիքով, այն առաջին նպատակակետն է, որին պետք է ձգտենք, որպեսզի մեծ թվով երկրներ իրենց օրենսդրությամբ մտցնեն ցեղասպանության հանցագործությունը Պատժական օրենսգրքի մեջ, որով կձևակերպվի իրավասության մի կանոնադրություն՝ ցեղասպանության հանցագործության վերաբերյալ և երկրորդ՝ որ ընդունեն օրենքներ, որոնցով իրականանա համաշխարհային իրավասությունը: Այս ձևով կորդեգրվի յուրաքանչյուր երկրի դատարանների օրինականությունը՝ միջամտելու համար Թուրքիայի դեմ դատական պահանջների առիթով: Անժամկետության էական սկզբունքը գերազանցում է ոչ հետադարձության հավանական առարկություններին՝ դատական օրենքների կիրառման ժամանակ: Ավելի ստույգ՝ պետք է որդեգրել հետևյալ չափանիշը և այն ներառնել տարբեր երկրներում մեր աշխատանքի մեջ: Առաջին համաշխարհային պատերազմին նախորդող շրջանում, թուրքական կառավարությունը պատրաստեց ցեղասպանական մի ծրագիր, և դրանից հետո պատերազմի ժամանակ գործադրության մեջ դրեց այն, մի պետության անունով, որ սիստեմատիկ կերպով կյանքի էր կոչել մի գաղափարախոսական տիրակալություն: Այս ձևով բռնաբարվեցին իրավական կալվածները, որոնց պաշտպանությամբ շահագրգռված է միջազգային հասարակությունը: Այսօր, օրինազանցության գնով, Թուրքիան նկրտումներ ունի՝ ջնջել հիշողությունը և անպատիժ մնալ, որի համար ջանում է չեզոքացնել որևէ գործընթաց, որ կարող է պատասխանատվության կանչել իրեն: Եթե Թուրքիան գործնականորեն չի ճանաչում հայ ժողովրդի դեմ իր գործադրած այդ հանցագործությունը, ուրեմն նշանակում է, որ բռնաբարում է միջազգային իրավակարգը: Այս ժխտումի առջև որևէ օտար պետություն, իբրև գործուն անդամ միջազգային հանրության, գործադրելով իր օրինական պարտավորությունները և իրավունքները, կիրառելով համաշխարհային իրավասության սկզբունքը և իր ներքին օրենսդրությունը հարմարեցնելով միջազգային ուխտերից, դաշնագրերից, համաձայնագրերից և պայմանագրերից բխող հետևություններին՝ պետք է կարողանա հետապնդել ցեղասպան պետությանը, մինչև որ այն կրի իր պատիժը հրեշային այն ոճրի համար, որը գոր-

ծել է մարդկության դեմ, կանխելով նաև այդ նախընթացի կրկնության սպառնալիքը որևէ ուրիշ պետության կողմից:

Մինչ այդ, Թուրքիայի պատմաբաններին, մտավորականներին հալածանքներից զերծ պահելու համար քաջալերենք և միջազգային արշավի միջոցով հասնենք նրան, որ այս երկրի խորհրդարանն իր օրինագրքից ջնջի այն տրամադրությունները, որոնցով պատիժ է սահմանում բոլոր նրանց, ովքեր ընդունում են, որ Թուրքիան ցեղասպանություն է գործել հայերի հանդեպ Առաջին համաշխարհային պատերազմից առաջ, ընթացքում և այնուհետև:

Ընդհանրացնենք. ցեղասպանությունը ոճիր է ընդդեմ միջազգային հասարակության: Այն ուղղակիորեն խեղում է արժանապատվությունը մարդ-անհատի, որը իրավատերն է միջազգային իրավունքի հիմնական իրավունքների, և դա չի կարող անտեսվել Թուրքիայի կողմից: Դա ներքին հարց չէ, այլ ծանրագույն բռնաբարումն է այն հրամայական օրենքների ու սովորույթների, որոնք վարում և պահպանում է միջազգային իրավակարգը: Այդ իսկ պատճառով միջազգային հանրությունը, համապատասխան իր կառույցների միջոցով (Եվրամիության, ՄԱԿ-ի և այլն), պետք է Թուրքիային պատասխանատվության կանչի այն ոճրի համար, որ գործել է Օսմանյան կայսրության շրջանում և այնուհետև, պարտավորեցնի, որ ստանձնի այդ հանցագործության հետևանքները:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Ռիչարդ Սապպան. Կլոր սեղան՝ ազգային ատյանների գործունեության և հողամասնության հարցի շուրջ, 12-րդ սեմինար «Duque de Ahumada». Մադրիդ, 2000. 119:

ՀԵՐԵՔ ԳՐՑՈՒՐԹԱՀԱՅԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ